

# ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԵՆ ՄԱՐԱՏԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ-Ի

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ատենախոսության վերաբերյալ

### 1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

Սույն ատենախոսության սահմաններում քննվում են Գուրգեն Խանջյանի ստեղծագործությանը վերաբերող թեմատիկ և կառուցվածքային հարցերը: Այս աշխատանքն ուշագրավ է այնքանով, որ հայցորդը ընտրել է նոր ընկալումներով ժամանակակից հայ արձակի՝ մասնավորապես Խանջյանի աշխարհայեցողությունը բացահայտելու դժվարին ճանապարհը: Խանջյանի արձակը հնարավորություն է ընձեռում նախ և առաջ 1980-90-ական թվականների գրական ընթացքը ճանաչել, տեսնել նոր գեղարվեստի առաջացման հնարավորությունները, նոր ժամանակներն ու գրական միջավայրը: Հենց սա է եղել Կարեն Մանուչարյանի խնդրադրումը: Արդեն իսկ նոր մոտեցում ժամանակակից գրականագիտության մեջ: Թեման արդիական է նաև այն իմաստով, որ մինչ այս նման ամբողջական անդրադարձ չի եղել Գուրգեն Խանջյանի գրականությանը և այս աշխատանքն այդ տեսանկյունից առաջինն է: Չնայած վերջին օրերին հրապարակվեց նաև Սուրեն Աբրահամյանի լայնածավալ աշխատությունը Գուրգեն Խանջյանի արձակի մասին, որը բնականաբար դուրս է մնացել Կարեն Մանուչարյանի դիտադաշտից:

Հայցորդը մանրամասնորեն ուսումնասիրել է Խանջյանի գրականությունը՝ կատարելով ընդհանուր առմամբ ծավալուն աշխատանք: Այն բաժանել է 3 գլուխների, որոնցում բարձրացրել է այնպիսի հարցադրումներ, որոնք ուղղորդիչ են եղել գլխավոր նպատակի համար և հիմնավորում են կատարված աշխատանքի պատճառահետևանքային կապը:

Ատենախոսության լեզուն հստակ է, հայցորդի ասելիքը՝ համակարգված, տեսական և վերլուծական միտքը սահուն կապակցված են միմյանց: Մանուչարյանը կարողացել է հիմնավորել աշխատանքի արդիականությունը, մասնավորապես նշելով, որ «...արդի հայ գրականագիտական միտքը կարիք ունի այս հեղինակի ստեղծագործությանը նվիրված ամբողջական ուսումնասիրությունների, քանի որ խոսել Գ. Խանջյանի ստեղծագործության մասին նշանակում է նաև ընդհանրացնել ժամանակակից հայ գրական կյանքի գերիշխող ուղղություններն ու միտումները» (էջ 7):

## **2. Հետազոտության իրականացումը և արդյունքները**

Բավականին ամբողջական ներկայացված է Խանջյանի արձակը (պատմվածք, վիպակ, վեպ), դիտարկվել են գրական ընթացքի (1980-2000-ական թթ.) բոլոր արձագանքները Խանջյանի արձակի մասին, գրողի գաղափարական, տեսական հարցադրումները և կառուցվածքային հիմնական համակարգը: Օգտագործված են բավականաչափ աղբյուրներ, այդ թվում՝ տեսական գրականություն: Աշխատանքում հեղինակը քննել է նաև անկախության տարիների հայ հասարակական-քաղաքական կյանքի իրադարձություններն ու դրանց վերաբերյալ գրական արձագանքները, քննաբանել Խանջյանի արձակի ամբողջական համակարգում, դրանք համադրել ազգագրական իմացություններով և մեկ այլ տեսանկյունից վերլուծել առկա գրանյութը: Ատենախոսության կառուցվածքը, վերլուծության մակարդակը և ամբողջացումը այս առումով համակցված են ու հետաքրքրական: Բավականին իմացություններ ունի հայցորդը, կարողանում է վերլուծել գրական երևույթները, գնահատել, և բնականաբար, հենվում է տեսական մտքին: Մանուչարյանի ոճը

գիտական է լեզուն առանց խորթաբանությունների: Ընդհանուր առմամբ, աշխատանքը ստացված է, հարցադրումների շրջանակը՝ հետաքրքրական, մանրամասնորեն քննված, կառուցվածքը՝ տրամաբանված, ինչը մեզ հնարավորություն է ընձեռում դիտարկումներ կատարել և արժևորեն աշխատանքը:

### **3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը**

Աշխատանքը կազմված է Ներածությունից, երեք գլուխներից եզրակացությունից և Օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ տրվում է հարցի պատմությունը, կատարված աշխատանքի ամբողջական նկարագիրը, հարցադրումներն ու խնդրադրումները:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունն էքզիստենցիալիզմի և կենսագրական իրողությունների շղթաներում», ունի չորս ենթագլուխ: Առաջին՝ «Նմանողության երկու մակարդակներն արվեստում» ենթագլխում Մանուչարյանը անդրադառնում է ժամանակի Աբեղյանական երկբնույթ տեսակետին, և այդ տեսանկյունով վերլուծում Խանջյանի ստեղծագործությունը: Թերևս այստեղ մի տեսակ արհեստական համակցման ջանք է նկատվում, քանզի Աբեղյանի տեսակետը ավելի գործառնական է դասական գրականության պարագայում, իսկ Խանջյանի գրականությունը մի տեսակ ավելի նոր վերլուծական մոտեցումներ է ենթադրում: Նմանողության երկու մակարդակ առանձնացնելով Մանուչարյանը նշում է. «...նմանողության առաջին մակարդակը բնությունն է՝ Գ. Խանջյանի շուրջ սփռված իրականությունը և սեփական հոգեբանական տիպը» (էջ 15): Պետք է փաստել, որ բնություն և միջավայր պայմանական հասկացությունները Խանջյանի բնագրում իրենց տեղը զիջում են անհատի հոգեբանական տիպի զարգացումների շղթային, ուստի նկարագրական հատվածները Խանջյանի արձակում գրեթե բացակայում են: Երկրորդ ենթագլխում, որ վերնագրված է «Էքզիստենցիալիզմի բնութագրական առանձնահատկությունները», հայցորդը

ներկայացնում է էքզիստենցիալիզմի մեջ առկա քրիստոնեական և աստվածամերժության հոսանքներին, ներկայացնում տեսական հիմքերը: Սակայն Խանջյանի ստեղծագործության մեջ դրանց արձագանքները մնում են ուրվագծումների մակարդակին:

Երրորդ ենթագլխում՝ «Կենսագրական ազդակները՝ էքզիստենցիալ նշանների հիմքեր» վերնագրով, Մանուչարյանը շատ հետաքրքիր, նույնիսկ հակասական տեսական հարցադրում է բարձրացնում՝ գրողի կյանքը և դրա ազդեցությունը գրական տեքստի վրա: Գուցե որոշ մանրամասներ են բարձրաձայնվում, որոնք խիստ անձնական բնույթի են, ամեն դեպքում, այս ենթագլուխը կենսագրական նորոյա մեթոդով է կառուցված և կյանքի փաստն ու գրական տեքստը համադրվում են միմյանց հետը: Հայցորդը բարեխղճորեն ուսումնասիրել է նաև տեսական գրականությունն ու համակարգորեն ներկայացնում է նաև համաշխարհային գրականության մեջ եղած դրսևորումները:

Չորրորդ ենթագլխում՝ «էքզիստենցիալ նշանները Գուրգեն Խանջյանի երկերում» վերնագրով, գլխի հիմնական հենարանն է: Ներկայացվում է էքզիստենցիալիզմի տարաբնույթ դրսևորումները Խանջյանի գրականության մեջ: Մի խորհուրդ: Այս ենթագլխի վերնագրում **նշան** բառը, պարզ է նշանագիտական տերմինով չէ օգտագործված, այնուամենայնիվ նեղացնում է ասելիքի սահմանները: Այնինչ, հայցորդը բավականին մանրամասնորեն ներկայացնում է էքզիստենցիալիզմի դրսևորումները Խանջյանի ստեղծագործության մեջ: Ավելի շահեկան կլիներ վերնագրում նշան բառի փոխարեն օգտագործել դրույթ եզրույթը:

Երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը սոցիալ-քաղաքական իրադարձությունների շղթայում. Գուրգեն Խանջյանը և ժամանակակից հայ արձակը», ունի երկու ենթագլուխ: Առաջին ենթագլխում, որն ունի «Քննադատության ոչ միանշանակ վերաբերմունքը» խորագիրը, քննվում է Գուրգեն Խանջյանի ստեղծագործության վերաբերյալ ժամանակի գրականագիտական-քննադատական վերաբերմունքը: Խոսվում է ժամանակի գրական միջավայրում առկա կարծիքների

բազմազանության մասին, մատնանշվում են խանջանական գրականության մասին բանավիճային ներքին բախումները:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված «Անկախության տարիների հայ հասարակական-քաղաքական կյանքի բախտորոշ իրադարձությունների գրական արձագանքները» ներկայացվում է ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակով պայմանավորված ներկա-անցյալ թեմաների հասունացմուն ու դրանց ներթափանցումը գրականություն, ապա և՛ դրանց դերը ժամանակի գրականության համապատկերում: Մյուս կողմից էլ պատկերվում է խորհրդային կյանքի և անկախության տարիների ներքին հակադրությունները: Համեմատական քննություն է կատարվում նաև ժամանակակից մի շարք գրողների ստեղծագործությունների հետ (Վահագն Գրիգորյան, Ռաֆայել Նահապետյան, Լևոն Խեչոյան, Արարատ Գյուլբանգյան, Հրաչյա Սարիբեկյան և այլն):

Սա ժամանակի գրական ընթացքի իմացություն է ենթադրում, որն ի պատիվ հայցորդի՝ տեսանելի է աշխատանքի այս մասում: Սակայն մյուս կողմից մի շարք անուններ (Հովհաննես Մելքոնյան, Վահան Սաղաթելյան, Արտաշես Ղահրիյան, Վրեժ Իսրայելյան, Վահան Թամարյան և այլք), որոնց հետ ներքին բնագրային աղերսներ ունի Խանջանի գրականությունը, դուրս են մնում մեկնաբանությունների տարածքից:

Երրորդ գլխում՝ «Կառուցվածքային հարցեր» վերնագրով, չորս ենթագլխերում դիսերտանտը կատարում է խանջանական արձակի կառուցվածքային վերլուծություն, հիմնականում անդրադառնալով տարբեր տեսական հարցադրումների: Չնայած ատենախոսը նշում է, որ «Ձևը և բովանդակությունը իրապես անքակտելի են» (էջ 104), այնուհանդերձ, մասնավոր հարցադրումներով բացակայող կերպարին, պատկերազդանշանների կառուցմանը, հայեցակետի կենտրոնացման եղանակներին և «տեքստը տեքստում» կառուցման ձևերին:

Սրանք կարևոր կառուցվածքաբանական ելակետային հարցադրումներ են, որոնց կարելի էր լրացնել ժամանակի և տարածության վերստեղծման

դրույթով, կերպարակերտման միջոցների բազմազանությամբ, միֆակիրառության ձևով կառուցումներին և այլն:

Վերջում կատարվում են 6 կետից բաղկացած եզրակացություններ, տրվում են այն գլխավոր պատասխանները, որոնք ուսումնասիրողը բարձրացրել է իր աշխատանքի մեջ:

#### **4. Դիտողություններ**

Ուսումնասիրման նյութը հարուստ է, հետաքրքիր ու բազմազան հարցադրումներ է ենթադրում և ուսումնասիրման տարակերպ մոտեցումներ է թելադրում: Կարեն Մանուչարյանը հաղթահարել է իր առջև դրված խնդիրը, բայցևայնպես մի քանի դիտողություն-ցանկություններ.

1. Թերևս կարելի էր գրողի ստեղծագործությունը փուլերի բաժանել և նման կերպ քննել ստեղծագործական զարգացումները: Պարզ է, որ 1990–ականների Խանջյանը և 2020–ականների Խանջյանը տարբեր են, ժամանակներ են տարբեր, մտայնություններն են տարբեր: Կարծում եմ Խանջյանը ստեղծաբանական երկու կարելի էր առանձնացնել մինչև 2000 թվական և դրանից հետո:
2. Թերևս աշխատանքի կառուցվածքում ավելի շահեկան կլիներ թեմատիկ արձագանքներին նվիրված գլուխ առանձնացնել, մանավանդ որ աշխատանքի վերնագրում առկա է այդ հարցադրումը: Թեմատիկ բազմազանությունը ընդհանուր սփռված է աշխատանքի տարբեր գլուխների տարբեր ենթագլուխներում:
3. Կարելի էր առանձին անդրադառնալ սուրբգրային թեմաների արձագանքներին, որոնք բազմաթիվ են թե՛ Խանջյանի և թե՛ ժամանակի գրեթե բոլոր գրողների գործերում: Սա մյուս կողմից կապված էր նաև ապոկալիպսիսյան տրամադրությունների հետ, երբ 1990–ականների մարդը սպասում էր աշխարհի վերջին:
4. Գրականության ցանկը կարող էր ավելի համակարգված լինել: Պետք էր առանձնացնել գրական մամուլ և էլեկտրոնային հարթակներ,

տեսական գրականություն և վերջում՝ գեղարվեստական գրականություն:

**5.Եզրակացություն.** Դիտողություններն ավելի շատ ցանկություններ են՝ ավելի լավ տեսնելու ուսումնասիրությունը և չեն ստվերում կատարված լուրջ աշխատանքը: «Գուրգեն Խանջյանի ստեղծագործության թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները» աշխատանքը բավարարում է ատենախոսության պահանջներին, և հեղինակը՝ Կարեն Մարատի Մանուչարյանը արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

**Գրախոս՝**

**Ավանեսյան Արմեն Ավանեսի**

(ազգանուն, անուն, հայրանուն)

*Բանասիրական գիտությունների թեկնածու*

(գիտական աստիճան և կոչում)

**ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. Գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնի վարիչ**

(աշխատանքի վայրը, աշտոնը)

«11» նոյեմբերի 2025 թ.

Ստորագրություն \_\_\_\_\_

